ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հոկտեմբերի 2022 թվականի №__-Ա
ք. Երևան

«ՍՄԲՈՒԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի №145-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի ապրիլի 13-ի №145Ա որոշմամբ երկարաձգվել է «ՍՄԲՈՒԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Անգեղակոթ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0243 լիցենզիայի գործողության ժամկետը, իսկ որոշման 2-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է երկամսյա ժամկետում՝ մինչև 2022 թվականի հունիսի 20-ը, Հանձնաժողով ներկայացնել Կայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն, քանի որ Ընկերության 2022 թվականի մարտի 30-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված 2011 թվականի սեպտեմբերի 29-ի №000362 ջրօգտագործման թույլտվությում նշված ջրառի և ջրահեռացման նիշերը տարբերվել են 2006 թվականի դեկտեմբերի 28-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական ԲՓ-165 եզրակացության ջրառի և ջրահեռացման նիշերից,

բ) Ընկերությունը 2022 թվականի հունիսի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից 2022 թվականի հունիսի 15-ի №4/10.1.3/9475 գրությամբ տրամադրված տեղեկանքը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ պայմաններում առկա է ջրառի նիշի վրիպակ: Նախարարությունը տեղեկանքում նշել է նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության

հաստատմանն է ուղարկել 2003 թվականի մարտի 7-ի №218 որոշմամբ հաստատված ջրօգտագործման ստացման, գործողության ժամկետի երկարաձգման և վերաձևակերպման կարգում փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը, որի հաստատումից հետո միայն նշված վրիպակը կշտկվի,

գ) Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ 2022 թվականի ապրիլի 13-ի №145Ա որոշման 2-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի հուլիսի 1-ի գրությամբ հայտնել է, որ որ 2022 թվականի հուլիսի 6-ին կրկին դիմել է Նախարարություն՝ ջրօգտագործման մեջ առկա տեխնիկական վրիպակների շտկման և ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն ստանալու խնդրանքով,

ե) Հանձնաժողովը 2022 թվականի սեպտեմբերի 23-ի №ԳԲ/34.1-Մ4-3/3328-2022 գրությամբ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր կամ այլ տեղեկություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ փոխօգնության կարգով դիմել է Նախարարություն՝ Ընկերության կողմից Կայանի ջրօգտագործման թույլտվության ճշգրտման համար Նախարարություն դիմելու փաստի, ինչպես նաև շտկված ջրօգտագործման թույլտվության չտրամադրման պատճառների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով,

զ) Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի №377-Ա որոշմամբ կասեցվել է հունիսի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի №ԳԲ/34.1-Մ4-3/3328-2022 գրությամբ հայցվող տեղեկատվությունը Նախարարությունից ստանալը,

է) Նախարարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի №1/10.1.5/13402 գրությամբ ստացվել է պահանջված տեղեկատվությունը, որով ի թիվս այլնի նշվել է, որ Ընկերության ներկայացուցիչները հրավիրվել են Նախարարություն՝ ստանալու վերանայված ջրօգտագործման թույլտվության իրենց օրինակը,

ը) 2022 թվականի հոկտեմբերի 11-ից վերսկսվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի №377-Ա որոշմամբ կասեցված վարչական վարույթը,

թ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է 2022 թվականի ապրիլի 13-ի №145Ա որոշման 2-րդ կետի պահանջը, մինչ օրս չի

ներկայացրել ճշգրտված ջրօգտագործման թույլտվությունը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 13-ի №145Ա որոշման 2-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի ապրիլի 20-ի №184Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №145Ա որոշման 3-րդ կետում «սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «մինչև 2022 թվականի դեկտեմբերի 12-ը» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, իսկ 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունիսի 20-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
-- հոկտեմբերի 2022թ.